Պարունակում է մրցութային գաղտնիք

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 44

«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի Կառավարման խորհրդի 2009թ. օգոստոսի 7-ին ժամը 14:00-ին ՀՀ Կառավարության նիստերի դահլիճում կայացած նիստի

Նիստը նախագահում էր.

ՀՀ Վարչապետ, «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի Կառավարման խորհրդի նախագահ Տիգրան Սարգսյանը

Մասնակցում էին՝

Կառավարման խորհրդի անդամներ.

Արմեն Գևորգյանը	ՀՀ փոխվարչապետ, ՀՀ տարածքային կառավարման նախարար
Ներսես Երիցյանը	ՀՀ էկոնոմիկայի նախարար
Գուրգեն Սարգսյանը	ՀՀ տրանսպորտի նախարար
Տիգրան Դավթյանը	ՀՀ ֆինանսների նախարար
Սամվել Ավետիսյանը	ՀՀ գյուղատնտեսության նախարարի առաջին տեղակալ
Արման Ոսկանյանը	«Տավուշի զարգացման» ՀԿ-ի ներկայացուցիչ
Շիրակ Միքայելյանը	«Աշխատանք և հայրենիք» ՀԿ-ի լիազոր ներկայացուցիչ
Կարեն Զադոյանը	«Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» ՀԿ-ի նախագահ
Պողոս Շահինյանը	«Ճանապարհային անվտանգության ազգային խորհուրդ» ՀԿ-ի նախագահ

Կառավարման խորհրդի դիտորդ.

Ալեքս Ռասինը	Հայաստանում ԱՄՆ «Հազարամյակի մարտահրավեր» կորպորացիայի գրասենյակի տնօրեն

Նիստից բացակայում էին.

Վահրամ Ներսիսյանցը	ՀՀ Նախագահի տնտեսական հարցերով գլխավոր խորհրդական, «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի Կառավարման խորհրդի փոխնախագահ
Գերասիմ Ալավերդյանը	ՀՀ գյուղատնտեսության նախարար

Վիկտոր Ենգիբարյանը	«Հայաստանի եվրոպական շարժում» ՀԿ-ի նախագահ
Ռուբեն Խաչատրյանը	«Հայաստանում վայրի բնության և մշակութային արժեքների պահպանության» հիմնադրամի տնօրեն, ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի Կառավարման խորհրդի բնապահպանական դիտորդ

Նիստին հրավիրված էին.

Դավիթ Սարգսյանը	ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար
Անդրանիկ Անդրեասյանը	ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահ
Արամ Ղարիբյանը	ՀՀ Վարչապետի խորհրդական

Նիստին մասնակցում էին նաև.

Արա Հովսեփյանը	«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն
Նորա Մարտիրոսյանը	«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի իրավախորհրդատու, կառավարման խորհրդի քարտուղար
Անահիտ Պետրոսյանը	«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի Ջրից դեպի Շուկա ծրագրի ղեկավար/Տնտեսագետ
Ահարոն Շիրինյանը	ՀՄԿ Վաշինգտոնյան գրասենյակի՝ Մամլո և հանրային կապերի գծով ղեկավար
Սոնիա Շահրիգյանը	ՀՄԿ Վաշինգտոնյան գրասենյակի՝ ՀՄՀ-Հայաստան ծրագրի պատասխանատու համակարգող
Հովհաննես Սահակյանը	ՀՀ կառավարության աշխատակազմի տնտեսագիտական վարչության պետի տեղակալ
Ռիմա Եգանյանը	ՀՀ կառավարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության առաջատար մասնագետ
Մարինա Քուշքյանը	ՀՀ կառավարության աշխատակազմի արձանագրային բաժնի աշխատակից
Խաչատուր Ադումյանը	Թարգմանիչ

Նիստը բացեց ՀՀ Վարչապետ, «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի Կառավարման խորհրդի նախագահ Տիգրան Սարգսյանը:

Նիստի օրակարգում ներկայացվել էին հետևյալ հարցերը.

1. «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ – Հայաստան ծրագրի վերանայված Մոնիտորինգի և գնահատման պլանի և վերջինիս հավելված հանդիսացող ծրագրի ընդհանուր շահառուների վերլուծության քննարկում և հաստատում:
2. ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի և համատեղ էյՍիԴիԱյ/ՎՈԿԱ, Մոտ Մաքդոնալդ և ՎԻՍՏԱԱ Պլյուս ընկերությունների միջև 2007թ. փետրվարի 13-ին կնքված պայմանագրի փոփոխության նախագծի քննարկում և հաստատում:
3. ՀՀ ոռոգման և դրենաժի ազգային քաղաքականության և ռազմավարության նախագծի քննարկում և հետագա քայլերի նախանշում:
4. «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ – Հայաստան ՊՈԱԿ-ի վերանայված կառուցվածքի քննարկում և հաստատում:
5. «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ – Հայաստան ՊՈԱԿ-ի Մոնիտորինգի և գանահատման ղեկավարի և Ծրագրային գործառնությունների ղեկավարի թեկնածուների հաստատում:
6. «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ – Հայաստան ծրագրի գնումների վերանայված պլանի քննարկում և հաստատում:
7. Այլ հարցեր՝

   ա/ «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ – Հայաստան ծրագրի «Չորս ինքնահոս համակարգերի կառուցում Այգեզարդում, Շենիկում, Մանթաշում և Վարդենիսում» IA/CB/CW-08/003 պայմանագրի նախագծի քննարկում և հաստատում:

   բ/ «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ – Հայաստան ՊՈԱԿ-ի Ծրագրերի համակարգման ղեկավարի հաստատում:

Օրակարգը հաստատվեց միաձայն:

Օրակարգին կից ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի կողմից կառավարման խորհրդի անդամներին ներկայացվել էր նաև յուրաքանչյուր հարցի վերաբերյալ համապատասխան տեղեկանք՝ կից փաստաթղթերով:

Նիստի ընթացքում.

Օրակարգի 1-ին հարցը ներկայացրեց ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արա Հովսեփյանը:

ՀՀ Վարչապետ Տիգրան Սարգսյանը հարցրեց, թե արդյոք հաշվի առնելով առկա տնտեսական ճգնաժամը, հնարավոր է կրճատել ՀՄՀ-Հայաստան ծրագրի այս կամ այն բաղադրիչի բյուջեն, ավելացնել տնտեսումները և այդ գումարն ուղղել այլ ոլորտ:

Արա Հովսեփյանը պատասխանեց, որ ցանկացած նոր ծրագիր, եթե այն դուրս է Համաձայնագրով հաստատված միջացառումների շարքից, չի ընդունվում ՀՄԿ-ի կողմից, ինչպես և ցույց է տվել մինչ այժմ եղած փորձը:

ՀՀ Վարչապետը նշեց, որ ՀՀ-ն տվյալ ծրագիրն առաջարկելիս հիմք է ընդունել առկա անհրաժեշտությունները, որոնք, սակայն ժամանակի ընթացքում ենթարկվել են որոշակի փոփոխությունների:

Ալեքս Ռասինը նշեց, որ հասկանում է ՀՀ կառավարության անհանգստությունը կապված առկա տնտեսական ճգնաժամի հետ, սակայն ՀՄԿ-ի կողմից հաստատված ծրագրերի գաղափարախոսությունն է հաստատել այնպիսի ծրագիր, որն արդիական կլինի վերջինիս իրականացման համար նախատեսված ամբողջ ժամանակահատվածում: Գումարային տեղաշարժ Համաձայնագրով հաստատված բաղադրիչների շրջանակում, ելնելով հիմնավոր անհրաժեշտությունից, հնարավոր է, սակայն ծրագրից դուրս որևէ վերաբաշխում անհնար է: Դա ՀՄԿ-ի առանձնահատկությունն է: Միաժամանակ, Ալեքս Ռասինը վստահություն հայտնեց, որ ԱՄՆ կառավարությունը, իր կողմից ՀՀ-ում իրականացվող այլ ծրագրերի շրջանակներում պատրաստակամություն կհայտնի կատարել տնտեսական ճգնաժամին դիմակայելու համար անհրաժեշտ այս կամ այն վերաբաշխումները և հատկացումները:

Ներսես Երիցյանը նշեց, որ ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի կողմից մոնիտորինգի և գնահատման պլանին կից ներկայացված ծրագրի ընդհանուր շահառուների վերլուծության մեջ նշված է, որ գյուղատնտեսության ոլորտում զբաղվածության մասով շահառուների թիվը նշված է 427,000, արդյոք այս թիվն իրատեսական է:

Արա Հովսեփյանը պատասխանեց, որ նշված 427,000 մարդկանց քանակը ՀՄՀ-Հայաստան ծրագրի ոռոգման և ճանապարհաշինության ենթածրագրերի ուղղակի և/կամ անուղղակի շահառու անձանց ընդհանուր թիվն է՝ ըստ ՀՄԿ շահառուների թվի հաշվեգրման նոր ուղեցույցի:

ՀՀ Վարչապետը բարձր գնահատեց այն փաստը, որ Ջրից դեպի Շուկա բաղադրիչի շրջանակներում ուսուցանվում են 45,000 ֆերմերներ, սակայն հիմնական հարցը մնում է այն, թե ինչ գիտելիքներ են վերջիններս ստանում և ինչ որակի:

Արա Հովսեփյանը հայտնեց, որ 2009թ. սեպտեմբերի 25-26-ին կազմակերպվելու է Ջրից դեպի Շուկա ծրագրի հանրային ներկայացում - ցուցահանդես, որի ընթացում տաղավարներում ցույց է տրվելու այն արդյունքները և արտադրանքը, որին նպաստել է ծրագիրը:

Արմեն Գևորգյանը հարցրեց, թե ինչ կարգով են կազմակերպվում դասընթացները:

Արա Հովսեփյանը հայտնեց, որ ընտրված համայնքներում հայտարարություններ են տրվում, հավաքվում է հետաքրքրված գյուղացիներից կազմված 20-30 հոգանոց խումբ և 5 օրվա ընթացքում իրականացվում է դասընթաց ջրի ներտնտեսակային կառավարման կամ բարձրարժեք գյուղատնտեսությունու թեմաներով: Հինգ օրերից մեկը կամ երկուսը լինում են դաշտային աշխատանքները:

ՀՀ Վարչապետը հարցրեց, թե առ այսօր քանի ուսուցում անցած ֆերմեր կա և ինչպես է գնահատվում այդ դասընթացների արդյունավետությունը:

Արա Հովսեփյանը պատասխանեց, որ վերջիններիս թիվը կազմում է մոտ 28,800 մարդ, իսկ արդյունավետությունը գնահատվում է ելնելով նրանից, թե քանիսն են կիրառել ստացված գիտելիքներն ու, մասնավորապես, ուսուցանված նոր տեխնոլոգիաները: Այդպիսիք մոտ 9,991 են համաձայն վերջերս անցկացրած կիրառման հարցման գնահատականների:

ՀՀ Վարչապետը նշեց, որ նաև հնարավոր է 45,000-ի փոխարեն, ի սկզբանե զտել այն 1000 ֆերմերին, որոնք հանդիսանում են, ըստ էության, ծրագրի թիրախային խումբը և ուսուցանումն իրականացնել միայն այս 1000-ի հետ:

Արա Հովսեփյանը պատասխանեց, որ բացի ուսուցանումից ՀՄՀ-Հայաստան ծրագրի շրջանակներում առկա են նաև վարկային միջոցներ, որոնք հնարավորություն են տալիս ուսուցումն անցած ֆերմերին կիրառել այն տեխնոլոգիաները, որոնց մասին վերջինս ստացել է գիտելիքներ դասընթացների ընթացքում:

Ներսես Երիցյանը հարցրեց, թե ինչ մեթոդաբանություն է կիրառվել հաշվարկները կատարելիս:

Արա Հովսեփյանը նշեց, որ ՀՄՀ-Հայաստանը կարող է ներկայացնել հաշվետվություն, որում ցույց կտրվի, թե ինչ մեթոդներ են կիրառվել, ինչպես նաև կազմակերպել կարճ ներկայացում մեթոդաբանությունը և հաշվարկներում կիրառվող գործիքները:

ՀՀ Վարչապետը հանձնարարեց ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ին ՀՀ տարածքային կառավարման նախարարությանը ներկայացնել այն համայնքների ցուցակները, որտեղ ընթանում են դասընթացները, որպեսզի վերջինս հետևի և համեմատի ծրագրի շահառու համայնքների ընդհանուր առաջընթացը մնացած համայնքների համեմատ:

Արա Հովսեփյանը նշեց, որ Ջրից դեպի Շուկա ծրագրի վերանայված թիրախներն ավելի ակնհայտ երևում են 2-րդ տեղեկանքից, որը վերաբերում է Ջրից դեպի Շուկա ծրագիրն իրականացնող կազմակերպության պայմանագրի փոփոխության նախագծին:

Արման Ոսկանյանը հարցրեց, թե արդյոք Ջրից դեպի Շուկա ծրագրի դասընթացների քանակը որևէ կերպ համաձայնեցված եղել է ՀՀ կառավարության հետ, թե ոչ, և արդյոք հնարավոր չէ, ելնելով հակաճգնաժամային միջոցառումների անհրաժեշտությունից, այդ ուսուցանվողների քանակը նվազեցնել, և գումարն ուղղել այլ ծրագրերի իրականացմանը:

Արա Հովսեփյանը հայտնեց, որ հիմնական ցուցանիշները համաձայնեցված և ներառված են եղել Համաձայնագրում դեռևս վերջինիս ստորագրման ժամանակ: Ընդ որում, Ջրից դեպի Շուկա ծրագրի հիմնական նպատակը սկզբանե եղել է աջակցել ոռոգման ծրագրի շահառուներին՝ տրամադրելով գիտելիքներ, որպեսզի վերջիններս ավելի արդյունավետ օգտագործեն և պահպանեն ոռոգման ենթակառուցվածքները, ինչն իր հերթին հնարավորություն կտա նվազեցնել ջրի կորուստները, ծախսը և ստանալ ավելի շատ եկամուտ:

ՀՀ Վարչապետը հարցրեց, թե որ կազմակերպությունն է իրականացնում այդ դասընթացները, ինչ հաճախականությամբ և ինչ գիտելիքներ են տրվում ֆերմերին այդ դասընթացների ընթացքում:

Արա Հովսեփյանը նշեց, որ դասընթացները կազմակերպվում են ACDI/VOCA, Euroconsult Mott MacDonald և VISTAA Plus ընկերությունների կողմից ամեն շաբաթ և դասընթացների ընթացքում հիմնական շեշտը դրվում է ինչպես ոռոգման ժամանակակից տեխնոլոգիաների ներկայացման և կիրառման վրա, այնպես էլ գործնական գիտելիքների, որոնք անմիջապես փորձարկվում են դաշտային աշխատանքի ժամանակ: Հիմնական նպատակն է ցույց տալ ֆերմերներին, թե ինչ գործիքներ կամ տեխնոլոգիաներ է պետք կիրառել, որպեսզի, քիչ ծախս կատարելով, հնարավոր լինի շատ եկամուտ ստանալ:

ՀՀ Վարչապետը հարցրեց, թե հնարավոր է արդյոք ստանալ այն մոդուլը, որի համաձայն իրականացվում է դասընթացը:

Արա Հովսեփյանը նշեց, որ դա հնարավոր է և պատրաստակամություն հայտնեց ներկայացնել այն, ինչպես նաև կազմակերպել հատուկ այցելություն՝ տեսնելու և լսելու կազմակերպվող դասընթացը և դասընթացներին մասնակից ֆերմերներին:

ՀՀ վարչապետը դրական ընդունեց առաջարկը և նշեց, որ ՀՀ փոխվարչապետ, ՀՀ տարածքային կառավարման նախարար պարոն Արմեն Գևորգյանը պարբերաբար այցելություններ է կատարում մարզեր և այդ այցելությունների ժամանակ հնարավոր է նաև այցել այդ դասընթացներից մեկը:

Անդրադառնալով դասընթացների արդյունավետությանը՝ Արման Ոսկանյանը նշեց, որ իրականում դասընթացները էֆեկտիվ են և ցանկացած լավ փորձ արագ իր տարածումն է գտնում գյուղում:

Պողոս Շահինյանը նշեց, որ տնտեսական ճգնաժամի պարագայում ակնհայտ է, որ մոտակա մի քանի տարիների ընթացում նմանատիպ մեծ ծավալի կրթական ծրագիր ՀՀ կառավարությունը չի իրականացի և կարելի է օգտագործել այս հնարավորությունը և թույլ տալ, որ վերջինս զարգանա:

ՀՀ Վարչապետը նշեց, որ ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված ցուցանիշներն իրոք տպավորիչ են և եթե ստացված գիտելիքները իրոք կիրառվում են, ուրեմն 3 տարի հետո ՀՀ գյուղատնտեսությունում էական աճ է նկատվելու:

Ներսես Երիցյանը հարցրեց, թե ով է ապահովելու այս կրթության տևականությունը, որպես օրինակ նշելով, որ այդ տևականությունը կարող է ապահովվել գյուղատնտեսական քոլեջների կողմից:

Սամվել Ավետիսյանը հայտնեց, որ դեռևս ծրագրի սկզբից իրենց կողմից բարձրացվել է ծրագրի տևականության հարցը: Ջրից դեպի շուկա ծրագիրն ու, մասնավորապես, դասընթացներն իրականացնող կազմակերպությունն ընտրվել է բաց մրցութային կարգով, ինչը հանգեցրեց մասնավոր ընկերության, որպես իրականացնող կազմակերպություն ի հայտ գալուն: Միաժամանակ առաջարկվեց ստեղծել մոնիտորինգային խումբ, որը կուսումնասիրի առկա իրական արդյունքները և առաջարկություն կներկայացնի հետագա աշխատանքները կազմակերպելու համար:

Արա Հովսեփյանը հայտնեց, որ ի սկզբանե կրթության շարունակականության և ծրագրի տևականության նպատակ չի դրվել: Ծրագրի հիմնական նպատակն է եղել ապահովել կապ ոռոգման ենթակառուցվածքների ծրագրի և այն անհատ ֆերմերների միջև, որոնք բարելավված ջրի մատակարարման ուղղակի շահառուներ են:

ՀՀ Վարչապետն ասաց, որ քանի որ ՀՀ-ն է ծրագրի սեփականատերը և ցանկանում է առավելագույն արդյունք ստանալ այդ ծրագրից, իսկ այդ արդյունքը հնարավոր է ստանալ ծրագրի շարունակականությունը ապահովելով, որը կարող են անել քոլեջները, ուստի պետք է այդ հմտությունները նրանց փոխանցել:

ՀՀ Վարչապետը հանձնարարեց ՀՀ գյուղատնտեսության նախարարությանը հանձնարարական տալ ՀՀ-ում այդ ոլորտում գործող 10 քոլեջներին գալ և հանդիպել ՀՄՀ-Հայաստան ծրագրի գլխավոր գործադիր տնօրենի հետ, իսկ ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ին հանձնարարական տվեց այդ դասընթացների մոդուլները տրամադրել 10 քոլեջներին և ԳԱՄԿ-երին, որոնք կապահովեն գիտելիքների փոխանցումը և շարունակելիությունը: ՀՀ Վարչապետ Տիգրան Սագսյանը հավելեց նաև, որ 45,000 ուսուցանվողներից 100-ը կլինեն ՀՀ կառավարության կողմից ընտրված անձինք քոլեջների և ԳԱՄԿ-երի աշխատակիցների ցանկից:

Ներսես Երիցյանը հավելեց, որ այդ անձինք չպետք է դասընթացներին մասնակցելով ակնկալեն որևէ ֆինանսական փոխհատուցում, այլ հակառակը, պետք է իրենք շահագրգռված լինեն ստանալու գիտելիքներ և հետագայում այդ գիտելիքները փոխանցելու իրենց ուսանողներին:

Անդրանիկ Անդրեասյանը հայտնեց, որ ուսուցանվողների ցանկում անհրաժեշտ է անպայման ներգրավել նաև ջրի գերծախս ունեցող համայնքները:

ՀՀ Վարչապետը համաձայնեց այդ մտքի հետ և հանձնարարեց Անդրանիկ Անդեասյանին այդ հարցի կապակցությամբ պաշտոնական նամակ ուղղել Արա Հովսեփյանին:

Արամ Ղարիբյանը նշեց, որ ՀՀ գյուղատնտեսության համար կարևոր է նաև տեխնոլոգիաների մատչելիության հարցը: Անհրաժեշտ է հիմքեր դնել առաջադեմ տեխնոլոգիաները ՀՀ-ում արտադրելու ուղղությամբ:

Արմեն Գևորգյանն առաջարկեց ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ին, ՀՀ գյուղատնտեսության նախարարությանը և ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեին աշխատել Գյուղատնտեսության զարգացման միջազգային ֆեդերացիայի (IFAD) հետ, քանի որ ակնկալվում է, որ նոր ծրագիր է լինելու ուղղված ամենայն հավանականությամբ ոռոգման ժամանակակից տեխնոլոգիաների ներդրմանը:

Քննարկումներից հետո **միաձայն որոշվեց՝** հաստատել «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ – Հայաստան ծրագրի վերանայված մոնիտորինգի և գնահատման պլանը և վերջինիս հավելված հանդիսացող ծրագրի ընդհանուր շահառուների վերլուծությունը:

Այսպիսով, օրակարգի առաջին հարցի շուրջ արձանագրվեցին իրականացման հետևյալ առաջիկա քայլերը՝ որպես հանձնարարականներ կամ առաջարկություններ՝

- ՀՄՀ-Հայաստանը տեղեկատվություն կտրամադրի ՀՀ էկոնոմիկայի նախարար Ներսես Երիցյանին ծրագային շահառուների թիվը հաշվելու մեթոդիկայի վերաբերյալ (ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի տնօրենի նախաձեռնություն).
- ՀՄՀ-Հայաստանը ՀՀ տարածքային կառավարման նախարարությանը կտրամադրի այն համայնքների ցանկը, որտեղ անցկացվել են դասընթացներ (ՀՀ վարչապետի հանձնարարական).
- Առաջիկայում կիրականացվի այցելություն ծրագրով իրականացվող դասընթացներից մեկը (ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի տնօրենի նախաձեռնություն).
- Գյուղատնտեսության նախարարությունը կնախաձեռնի հանդիպում ՀՄՀ-Հայաստանի և Հայաստանում գործող գյուղատնտեսական քոլեջների ներկայացուցիչների մասնակցությամբ (ՀՀ վարչապետի հանձնարարական).
- ՀՄՀ-Հայաստանը գյուղատնտեսական քոլեջներին և ԳԱՄԿ-երին կտրամադրի «Ջրից դեպի շուկա» ծրագրի դասընթացների մոդուլները (ՀՀ վարչապետի հանձնարարական).
- Ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահը նամակով կդիմի ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի տնօրենին՝ դասընթացի մասնակից համայնքների կազմում ընդգրկելու ջրի գերծախս ունեցող համայնքները (ՀՀ վարչապետի հանձնարարական):

Օրակարգի 2-րդ հարցը ներկայացրեց ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արա Հովսեփյանը:

ՀՀ Վարչապետը հայտնեց, որ նախորդ հարցի քննարկման ընթացքում արծարծված հարցերի մասին պետք է տեղեկացնել նաև այս ընկերություններին:

Միաձայն որոշվեց՝ հաստատել ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի և համատեղ էյՍիԴիԱյ/ՎՈԿԱ, Մոտ Մաքդոնալդ և ՎԻՍՏԱԱ Պլյուս ընկերությունների միջև 2007թ. փետրվարի 13-ին կնքված պայմանագրի փոփոխության նախագիծը:

Այսպիսով, օրակարգի երկրորդ հարցի շուրջ արձանագրվեց հետևյալ հանձնարարականը՝ ՀՄՀ-Հայաստանը կտեղեկացնի «Ջրից դեպի շուկա» ծրագրի իրականացնող կազմակերպություններին սույն արձանագրության օրակարգի առաջին հարցերի շուրջ տեղի ունեցած քննարկումների և որոշումների վերաբերյալ:

Օրակարգի 3-րդ հարցը ներկայացրեց ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արա Հովսեփյանը:

ՀՀ Վարչապետն առաջարկեց ՀՀ ոռոգման և դրենաժի ազգային քաղաքականության և ռազմավարության նախագիծն ուղարկել համապատասխան գերատեսչություններին՝ քննարկման և դիտողությունների ներկայացման համար, որից հետո ՀՀ կառավարությունը կհաստատի փաստաթղթի վերջնական տարբերակը:

Ներսես Երիցյանը նշեց, որ միջազգային խորհրդատվական ընկերություններ վարձելու ժամանակ անհրաժեշտ է հատկապես ուշադրություն դարձնել օտարերկրյա խորհրդատուների ներգրավման ժամանակային քանակի վրա և ապահովել վերջիններիս հնարավորինս ակտիվ մասնակցությունը:

Արա Հովսեփյանը նշեց, որ այդ մասնագետների մասնակցությունը հաշվի է առնվում դեռևս մրցութային փուլում:

Արմեն Գևորգյանը նշեց, որ ՀՀ ոռոգման և դրենաժի ազգային քաղաքականության և ռազմավարության նախագծում անհրաժեշտ է ներառել հատուկ բաժին, որը կվերաբերի գերնորմատիվային հողերին և այդ մասով անհրաժեշտ է նաև համագործակցել Համաշխարհային բանկի մասնագետների հետ:

ՀՀ Վարչապետն ընդունեց առաջարկը և հանձնարարեց ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ին համապատասխան խորհրդատուին տեղեկացնել ՀՀ-ում առկա գերնորմատիվային հողերի խնդրի մասին և ստանալ վերջիններիս փորձը միջազգային պրակտիկայում առկա նմանատիպ դեպքերի վերաբերյալ և կարծիքն այն հարցի կապակցությամբ, թե այդպիսի հողերն ընդհանրապես ենթակա՞ են գյուղատնտեսական նպատակներով օգտագործման, թե ոչ:

Քննարկումներից հետո **<u>միաձայն</u> որոշվեց՝** որպես ՀՀ ոռոգման և դրենաժի ազգային քաղաքականության և ռազմավարության նախագծի վերաբերյալ կարծիքների ստացման և քննարկման մասով համակարգող մարմին նշանակել ՀՀ տարածքային կառավարման նախարարությանը և սահմանել փաստաթղթի քննարկման և ընդունման ժամանակացույցը և կարգը /ըստ տեղեկանքի/ և համաձայն ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված տարբերակի՝ փաստաթղթի հաստատման վերջնաժամկետ սահմանել 2009թ. նոյեմբերի 20-ը:

Այսպիսով, օրակարգի երրորդ հարցի շուրջ արձանագրվեց հետևյալ հանձնարարականը՝
ՀՄՀ-Հայաստանը իր խորհրդատուին կտրամադրի տեղեկատվություն ՀՀ-ում գերնորմատիվային հողերի վերաբերյալ և կստանա վերջինիս կարծիքը դրանց կիրառության միջազգային փորձի վերաբերյալ:

Օրակարգի 4-րդ հարցը ներկայացրեց ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արա Հովսեփյանը:

Դավիթ Սարգսյանը հայտնեց, որ ծանոթացել է ՀՄՀ-Հայաստանի վերանայված կառուցվածքին և դիտողություններ չունի՝ մնացածը կառավարման խորհրդի գնահատման հարցն է:

Անդրանիկ Անդրեասյանը նշեց, որ եթե շինարարությունն իր նախատեսված ժամանակացույցով գնա, ապա հիմնավոր է ևս երկու-երեք ճարտարագետ-շինարարի ներգրավման հարցը:

Արմեն Գևորգյանը հայտնեց, որ եթե ներկայացված կառուցվածքի պարագայում ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ն ի վիճակի լինի ծրագիրն իրականացնել բարձր որակով և գործադիր տնօրենն այդ կապակցությամբ առաջարկում է ավելի լավ կառուցվածք, ապա որևէ խնդիր չկա:

ՀՀ Վարչապետը հայտնեց, որ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի գիտնականները ներկայացրել են նորամուծություն, որն, ըստ իրենց պնդման, ավելացնում է բետոնե խողովակների երկարակեցությունը, ուստի անհրաժեշտ է, որ այս հարցի վերաբերյալ առկա նյութերն ուսունասիրվեն նաև ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի մասնագետների կողմից: Այդ նորարարության հետ կապված բոլոր նյութերը Դավիթ Սարգսյանի կողմից կտրամադրվեն ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ին:

Քննարկումներից հետո **<u>միաձայն</u> որոշվեց՝** հաստատել «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ – Հայաստան» ՊՈԱԿ-ի վերանայված կառուցվածքը, ըստ ներակայցված տեղեկանքի:

Այսպիսով, օրակարգի չորրորդ հարցի շուրջ արձանագրվեց հետևյալ հանձնարարականը՝ ՀՄՀ-Հայաստանի մասնագետները կարծիք կտրամադրեն ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի գիտնականների կողմից առաջարկվող նորամուծության (բետոնե խողովակների երկարակեցության համար) վերաբերյալ՝ ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար Դավիթ Սարգսյանի կողմից համապատասխան նյութերը տրամադրելուց հետո:

Օրակարգի 5-րդ հարցը և 7-րդ հարցի բ/ կետը համատեղ ներկայացրեց ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արա Հովսեփյանը:

<u>Միաձայն</u> որոշվեց հաստատել «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ – Հայաստան ՊՈԱԿ-ի Մոնիտորինգի և գնահատման ղեկավարի պաշտոնում Լուսինե Խառատյանին, Ծրագրային գործառնությունների ղեկավարի պաշտոնում Հակոբ Պետրոսյանին և Ծրագրերի համակարգման ղեկավարի պաշտոնում Էսթեր Հակոբյանին:

Օրակարգի 6-րդ հարցը ներկայացրեց ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արա Հովսեփյանը:

Արմեն Գևորգյանը հարցրեց, թե արդյոք նոր պետք է մեկնարկի 6 մայր ջրանցքների շինարարության 2-րդ փաթեթով նախատեսված աշխատանքները և միաժամանակ հետաքրքրվեց, թե ինչ է փոխվել դրենաժային համակարգի մասով:

Արա Հովսեփյանը հավաստեց, որ 6 մայր ջրանցքների 2-րդ փաթեթի մրցույթը նոր պետք է սկսվի /մինչև ս.թ. օգոստոսի վերջ/, իսկ դրենաժային համակարգի մասով առանձնացվել են դրենաժի մաքրումը և վերականգնումը, որը հնարավորություն կտա արագացնել մրցույթն ու իրականացման աշխատանքները:

Արմեն Գևորգյանը հայտնեց, որ գնումների պլանում նշված են այն երեք ինքնահոս համակարգերը, որոնք ՀՄԿ-ի կողմից հանվել էին ծրագրից տեխնիկական պատճառներով և խնդրեց պարզաբանել այդ փաստը:

Արա Հովսեփյանը հայտնեց, որ չնայած մերժմանը, ՀՄՀ-Հայաստանը ձեռնամուխ է եղել որոշման վերանայման գործընթացին, քանի որ, ՀՄԿ-ի հետ այդ հարցի կապակցությամբ ակտիվ աշխատանք վարելուց հետո, համարել է այն իրատեսական: Ներկայումս ՀՄՀ-Հայաստանը պաշտոնապես դիմել է ՀՄԿ-ին, որպեսզի այդ երեք համակարգերից որևէ մեկը, կամ անգամ 3-ը, նորից ներառվեն ծրագրում:

Դավիթ Սարգսյանն առաջարկեց գնումների պլանում նշել նաև մրցույթների մեկնարկման մոտավոր ժամկետները:

ՀՀ Վարչապետը և Արմեն Գևորգյանն առաջարկեցին դիմել ՀՄԿ-ին մրցույթների ժամկետները կրճատելու հարցով, քանի որ դա ներկայումս առանցքային հարց է ծրագրի ամբողջ ծավալով իրականացման համար: Մասնավորապես, առաջարկվեց որպես կանոն մրցութային փաթեթների ներկայացման ժամկետ սահմանել նվազագույնը 4 շաբաթ, 6-ի կամ 8-ի փոխարեն:

Քննարկումներից հետո **<u>միաձայն</u> որոշվեց** հաստատել «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ – Հայաստան» ծրագրի գնումների վերանայված պլանը:

Այսպիսով, օրակարգի հինգերորդ հարցի շուրջ արձանագրվեց հետևյալ հանձնարարականը՝ ՀՄՀ-Հայաստանը կդիմի ՀՄԿ-ին սահմանված մրցութային ժամկետները կրճատելու առաջարկությամբ:

Օրակարգի 7-րդ հարցի ա/ կետը ներկայացրեց ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արա Հովսեփյանը:

ՀՀ Վարչապետն առաջարկեց ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ին փորձել բանակցել հաղթող ընկերության հետ՝ առաջարկած գնի նվազեցման ուղղությամբ, եթե այն թույլ է տրվում գնումների ընթացակարգով:

Միաձայն որոշվեց հաստատել «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ – Հայաստան ծրագրի «Չորս ինքնահոս համակարգերի կառուցում Այգեզարդում, Շենիկում, Մանթաշում և Վարդենիսում» IA/CB/CW-08/003 պայմանագրի նախագիծը:

Այլ հարցերի շրջանակներում Արմեն Գևորգյանը տեղեկացրեց, որ Այգեզարդի, Շենիկի և Վարդենիսի ինքնահոս համակարգերի կառուցման համար անհրաժեշտ հողի առգրավման և փոխհատուցումների մասով պայմանագրերն արդեն կնքված են և հայտնեց, որ անհրաժեշտ է, որպեսզի ՀՀ ֆինանսների նախարարությունը հնարավորինս շուտ կատարի համապատասխան միջոցների փոխանցումը:

Հարցերի սպառումից հետո նիստն ավարտվեց:

«ՀԱԶԱՐԱՄՅԱԿԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐ» ՀԻՄՆԱԴՐԱՄ-ՀԱՅԱՍՏԱՆ»
ՊՈԱԿ-Ի ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ,
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ

«ՀԱԶԱՐԱՄՅԱԿԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐ» ՀԻՄՆԱԴՐԱՄ-ՀԱՅԱՍՏԱՆ»
ՊՈԱԿ-Ի ԳԼԽԱՎՈՐ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ Ա. ՀՈՎՍԵՓՅԱՆ

Նիստն արձանագրեց՝
«ՀՄՀ-Հայաստան» ՊՈԱԿ-ի իրավախորհրդատու,
«ՀՄՀ-Հայաստան» ՊՈԱԿ-ի Կառավարման Խորհրդի քարտուղար
Ն. Մարտիրոսյանը